Հարցադրում

Համեմատի՛ր և հակադրի՛ր Թըմկա տիրուհու և Այծեմնիկի կերպարները: Պաշտման մեջ հայտնվելով՝ ի՞նչ բայլի դիմեց Թմկա տիրուհին: Նման իրավիճակում ի՞նչ բայլի դիմեց Այծեմնիկը:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ.

Թեմա՝ Հովհաննես Թումանյան «Թմկաբերդի առումը»

Ու ղըրկեց Շահը իր թովիչ երգչին,	Լինիս շբե՛ղ թագուհի...
Գընա տե՛ս, ասավ, Թըմկա տիրուհուն,	Լըսում է չքնաղ Թըմկա տիրուհին
Երգի՛ իմ սերը նըրա առաջին,	Գիշեր ու ցերեկ, նորից ու նորից
Պատմի՝ իմ փառքը ու գանձը անհուն:	Ու դարձավ նա լո՛ւռ, դալուկ, մըտախոհ,
Խոստացի նըրան իմ ոսկի գահը,	Ու քունը փախավ սիրուն աչքերից...
Խոստացի նըրան ամե՛ն, ամեն բան,	Է՛յ, հըսկեցե՛ք, ի՞նչ եք քընում,
Ինչ որ կարող է խոստանալ Շահը,	Քաջ զինվորներ Թաթուլի
Երկրակալ Շահը իր սիրած կընկան:	Ո՞վ է, տեսեք, տանջվում մըթնում,
Գոռում են, դողում Թըմկա ձորերը,	Քուն չի աչքին մոտ գալի:
Կանգնած է Թաթուլ Շահի հանդիման ...	Զըլինի՞ թե հաղթահարված,
Զարկում են, զարկվում դուշման զորքերը,	Ճարը հատած թըշնամին
Արյունը հոսում են Քըռի նըման.	Դավ է դընում մութն ու մեռած
Երգում է աշուղն իր Շահի սերը,	Կես գիշերվա էս ժամին:
Անհուն գանձերը ու փառքն անսահման...	Վե՛ր կացեք, վե՛ր, ամբողջ գիշեր
Լըսում է մատաղ Թըմկա տիրուհին.	Մարդ է գընում ու գալի
Եվ վըրդովում են իր միտքը թաքուն	Հե՛յ, զարթնեցե՛ք, առյուծ քաջեր,
Դավաճան գործի ամոթը խորին	Պահապաններ Թաթուլի:
Եվ արքայական փառքն ու մեծություն...	Վե՛ր կացեք, վեր, հարբեցրել է
Լսո՞ւմ ես դու, սիրուն տիկին,	Իր հաղթական հյուրերին,
Այ նազանի աննըման.	Բաց է անում դուռն ու դարպաս
Նայի Շահին, իրեն զորքին,	Ձեր դավաճան տիրուհին:
Աշխարհի տերն անսահման...	Դա վ. դա՛վ. ելե՛ք... կոչնա՛կ... պահնա՛կ...
Մեզ պես ըզկար մարդ է նա էլ	Ձենք առեք շո՛ւտ ձի հեծե՛ք, ձի...
Սիրուհիներին միշտ գերի.	Ճըռընչում են, դըղըրդում են
Քու ճակատին թագ է վայել	Դարպասները երկաթի:

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ .

Հատված Պատմությունից (խմբ.)

XII-րդ դարում Հայաստանը և շրջակա տարածքները սելջուկ-թուրքերի կողմից ենթարկվեցին հարձակումների: Հայ ժողովուրդը համառ կերպով պայքար էր մղում նրանց դեմ: Սելջուկ թուրքերի հերթական հարձակման ժամանակ պաշարման մեջ հայտնվեց Անի քաղաքը: Անիի պաշտպանության գործում 1124 թ. աշխի ընկավ Այծեմնիկ անունով մի կին: Նա Անիի պարիսպների վրա քաջաբար պայքարում էր Փատլուն ամիրայի զորքերի դեմ: Ըստ Սամվել Անեցի պատմիչի՝ Անիի պաշարումը տևել է մեկ տարի՝ բերելով մեծ ավեր և սով քաղաքում ու ողջ Շիրակում: Այծեմնիկը, կանգնած պարիսպների վրա, հերոսաբար մասնակցում էր այդ կռիվներին: Նա, անտեսելով իր վերքերը, թշնամու արձակած նետերը դուրս էր քաշում մարմնից և հետ ուղարկում:

Սամվել Անեցին իր տարեգրության մեջ ոգեշունչ տողերով ներկայացնում է Այծեմնիկի սխրանքը. «Եվ այս պատերազմում պարիսպների վրա իր առաքինությամբ պայծառացավ առնական սրտով մի կին, որը, պատվարի վրա ելնելով, արհամարհում էր խոր ցցված նետերը, որ վիրավորում էին նրան արտաքուստ»: Այս փոքրիկ հատվածն արտացոլում է ոչ միայն Այծեմնիկի անձնուրացությունը, այլև անեցիների համառ դիմադրությունը օտար տիրապետության դեմ:

Նիկողայոս Մառը նշում է, որ Անիի քաղաքային կյանքում առանձնանում էր կին-քաղաքացու դերը, որը ոչ միայն մասնակցում էր հասարակական նախաձեռնություններին, այլև կռվում էր քաղաքի պաշտպանության համար: Նույն կերպ Այծեմնիկը, չնայած վիրավոր լինելուն, շարունակում էր պայքարել՝ իր համաքաղաքացիների կողքին մնալով մինչև վերջ: